ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

հուլիսի 2021 թվականի № Ա
քաղ. Երևան

«ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶՋԷԿ)» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացրած «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2020 թվականի 4-րդ եռամսյակում կայացած ՀՋ-ԲՄԸ-ԲԲՍ220ՀԷՍ/ՆՆ-17/15.09.20-ԱՄ ծածկագրով «ԲԲՍ-220 սարքվածքների վերազինման և արդիականացման նախագիծ-նախահաշվի գնում» գործարքի (այսուհետ՝ Գործարք) մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ՝
   - նախքան Գործարքի համար մրցույթի հայտարարումը Ընկերությունը չի կատարել շուկայի ուսումնասիրություն,
   - Գործարքը նախատեսված չի եղել Ընկերության 2020 թվականի տարեկան հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանում (այսուհետ՝ Գնումների պլան),
2) 2020 թվականին գործող՝ Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ սահմանված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների (այսուհետ՝ Լրացուցիչ պահանջներ) հնարավոր խախտումների փաստի ուսումնասիրության նպատակով 2021 թվականի հունիսի 10-ից Հանձնաժողովն Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 10-ի №ԳԲ/34.3-Մ4-3/1984-2021 գրությամբ,

3) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում 2021 թվականի հունիսի 21-ի №83 գրությամբ հայտնել է, որ 2021 թվականի մայիսի 13-ի №67 գրությամբ արդեն իսկ ներկայացրել է իր դիրքորոշումը՝ նշելով, որ գնման առարկայի յուրօրինակությունից և բարդությունից ելնելով՝ մրցույթից առաջ կայան են հրավիրվել նեղ մասնագիտական նախագծային մի շարք կազմակերպություններ, որոնք ծանոթացել են նախագծի ծավալին, և նրանց առաջարկվել է մասնակցել մրցութին կամ ներկայացնել գնային առաջարկ, սակայն հրաժարվել են: Ինչ վերաբերում է Գործարքը Գնումների պլանում նախատեսված չլինելուն, ապա ըստ Ընկերության, այն պետք է ներառվեր 2021 թվականի գնումների պլանում, քանի որ վճարումը կատարվելու էր 2021 թվականին, և ժամանակ շահելու նպատակով մրցույթն անցկացվել է 2020 թվականի նոյեմբերին,
4) Լրացուցիչ պահանջների 13-րդ կետի (Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշմամբ սահմանված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջների 9-րդ և 10-րդ կետեր) համաձայն՝ անկախ որևէ հանգամանքից, Գնումների պլանի կազմման նպատակով, հանրային կազմակերպությունները պետք է կատարեն շուկայի ուսումնասիրություններ, որոնց արդյունքները (ոչ վաղ, քան նախորդող օրացուցային տարում իրականացված) ընկերության կողմից պետք է գրանցվեն՝ դառնալով գնման վերաբերյալ փաստաթղթերի անբաժանելի մաս, և փոփոխությունների դեպքում գնումների պլանի լրամշակված տարբերակը ենթակա է վերահրապարակման հինգ աշխատանքային օրվա ընթացքում,
5) Լրացուցիչ պահանջների 2-րդ, 13-րդ և 14-րդ կետերի պահանջների խախտման համար Հանձնաժողովի 2020 թվականի մարտի 18-ի №75Ա որոշմամբ Ընկերությունը նախազգուշացվել է, և համաձայն «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կայքում զետեղված տեղեկատվության՝ №RG023001070AM գծանիշ կոդով առաքանին (Հանձնաժողովի 2020 թվականի մարտի 18-ի №75Ա որոշման պատճենը) Ընկերությանը հանձնվել է 2020 թվականի մայիսի 20-ին, ուստի նույն թվականի մայիսի 21-ին մտել է ուժի մեջ և 2020 թվականի հուլիսի 21-ից դարձել անբողոքարկելի,
6) «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից,

բացառությամբ նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ հինգ միլիոն դրամից տասը միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում, կամ լիցենզիայի գործողության դադարեցում,

7) Հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ՝
   - Ընկերությունը խախտել է Լրացուցիչ պահանջների 13-րդ կետը (Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշմամբ սահմանված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջների 9-րդ և 10-րդ կետեր)՝ նախքան մրցույթի հայտարարումը շուկայի ուսումնասիրություն չկատարելով և Գործարքը Ընկերության 2020 թվականի Գնումների պլանում չնախատեսելով,
   - Ընկերության փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նեղ մասնագիտացված կազմակերպությունների ներկայացուցիչներին Ընկերության տարածք հրավիրելու փաստը՝ որպես շուկայի ուսումնասիրություն, ընդունելի չէ, քանզի, ըստ էության, շուկայի ուսումնասիրություն, որպես այդպիսին, չի կատարվել, այսինքն՝ չի ձևավորվել գնման առարկայի շուկայական գնի վերաբերյալ պատկերացում: Գնումների պլանում Գործարքը չներառելը այն հիմնավորմամբ, որ վճարումը պետք է կայանար 2021 թվականին, նույնպես ընդունելի չէ, քանի որ Լրացուցիչ պահանջների 13-րդ կետի համաձայն՝ գնումների պլանը, ի թիվս այլնի, պարունակում է նաև գնման ժամանակացույցը, այսինքն՝ նույնիսկ գնման համար հաջորդ տարի վճարման կատարում նախատեսելու դեպքում համապատասխան գնումը ենթակա է ներառման գնումների պլանում,
   - Ընկերության կողմից Լրացուցիչ պահանջների 13-րդ կետի պահանջի չկատարման արդյունքում, համաձայն «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մասի, առկա է արարքի կրկնակիություն,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Լրացուցիչ պահանջների 13-րդ կետի (Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշմամբ սահմանված հանրային կազմակերպությունների գնումների

կարգերի նկատմամբ պահանջների 9-րդ և 10-րդ կետեր) պահանջի խախտման համար Ընկերությանը տուգանել 5 000 000 (հինգ միլիոն) դրամ գումարի չափով:

2. Ընկերությանը՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով նախատեսված գումարը N900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
հուլիսի 2021թ.